"Հայոց Գործերից,,

քաղուած

Դուս արտաքին գործոց Նախարարութեան Դիւանից (Մոսկուա), 1720 թ. No. 3, Հոկտեմբերի 31: Յովակիմ եպիսկոպոսի մասին:

1. "Պատճառ գրոյս այս է, որ ես Ջուղայեցի Յովակիմ եպիսկոպոս եւ վարդապետս Հրամանաւ Տեառն Աղեքսանդրի կաթողիկոսի եւ աշակերտ Նորայ, որ եկի ի մայրաքաղաքս Ամստերդամ վասն Բ. պատճառի. Նախ՝ ողջոյն եւ օրհնութիւն....[1] երկրորդ վասն առ Աստուած փոխադրեալ Տէր Յովանէսի ընչիցն յորժամ եկինք աստ յամստրդամ քաղաքս թվ. (1710) ՌՃԾԹ. Սեպտ. ԺԱ. օթեւան կալաք աստ մինչեւ (1711) ՌՃԿ. յուլիսի Ի. բաղում անգամ հարցաք եւ խուզեցաք..... գրեցաւ ՌՃԿ. յուլիսի ԻԱ։"

2. Ամստրդամի հայ վաճառականների վկայութիւնը Յովակիմ եպիսկոպոսի մասին՝ գրուած 1717 թ.[1] յունիսի 15։

...(Ամստրդամից՝ Յովակիմ եպիսկոպոս ՌՃԿ = 1711 թ. յուլիսի 20ից յետոյ)[1] գնաց Հռոմ (այսինքն Հռոմ = Roma) վասն Ալիկսանու եկեղեցուն համար, որ հրաման առնու բանալ որպէս լուսահոգի կաթողիկոսն (այսինքն Աղէքսանդր՝ 1707—1715 թթ.) գրեալ էր փափին... յորժամ գնաց տեղն չարաճէլ մարդի+ շատ ամբաստանութիւն էին գրել ...տեղն արգիլեցի. այս վեց տարի է որ տեղն թողնում չէին թէ քաղաքէն դուս գայր (շատ խնդրել էր որ արձակեն, չէին լսել. վերջը Յով. եպսը վճռում է փախչել, որ եւ աջողում է իրեն. վերջապէս գալիս է Ամստերդամ) Գ — Դ ամիս

---

1 Կէտերը ... (բաց թողած), փակագծերը եւ փրկչ. թուականները իմն են։ Գ. Խ.